ԵՄ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Հովհաննիսյան Վարդուհի
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի լաբորանտ

ԽՍՀՄ փլուզումից հետո ԵՄ սկսեց ակտիվ ներգործություն ունենալ հետխորհրդային երկրներում, այդ թվում Հայաստանում և Վրաստանում՝ նախաձեռնելով տարատեսակ ծրագրեր պետությունների հետ համագործակցության զարգացման նպատակով: Պետությունների հետ հարաբերություններ ձևավորելուց հետո կողմերի միջև համագործակցությունը տնտեսական-տեխնիկական բնույթ էր կրում, որի շրջանակներում ԵՄ այդ երկրներին տրամադրեց հումանիտար և տեխնիկական աջակցություն, իսկ արդեն 1999թ. Գործընկերության և համագործակցության համաձայնագրերը[1] կողմերի միջև հարաբերությունների իրավական հիմքը դրեցին:

Համագործակցության սկզբնական շրջանում «ՏԱՍԻՍ», «ՏՐԱՍԵԿԱ», «ԻՆՈԳԵՅԹ» ծրագրերով և Գործընկերության և համագործակցության համաձայնագրերով (ԳՀՀ) ԵՄ աջակցում էր նորանկախ պետություններին հաղթահարել անցումային փուլի դժվարությունները: Այդ պետությունների նկատմամբ ԵՄ որդեգրել էր նույն մոտեցումը, հետևաբար համաձայնագրերը միմյանցից շատ չէին տարբերվում և տարբերակված չէին ըստ համապատասխան երկրների: Թեև պետություններն ունեին տարբեր աշխարհագրություններ, զարգանալու հեռանկարներ և տարբեր առաջանահերթություններ, նշված ծրագրերի շրջանակներում ԵՄ աջակցության նպատակներն ընդհանուր էին տարածաշրջանի համար: Ըստ Դ. Լինչի, «Այդ ժամանակահատվածում ԳՀՀ-ի շրջանակներից դուրս չձևակերպվեց որևէ ռազմավարական նպատակ կամ ավելի համապատասխան տարածաշրջանային մոտեցում: ԵՄ-ի մտածողության մեջ նախկին Խորհրդային միության

[1] Տե՛ս Partnership and Cooperation Agreements (PCAs): Russia, the Southern Caucasus and Central Asia, https://eur-lex.europa.eu/EN/legal-content/summary/partnership-and-cooperation-agreements-pcas-russia-the-southern-caucasus-and-central-asia.html

վերաբերյալ տարբերակումը ընթանում էր դանդաղ և Հարավային Կովկասի պետությունները հայտնվել էին ցուցակի վերջում»[2]:

Արդեն 2004 թ. Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) ծրագրում նաև այս պետություններին ներառելուց հետո, ԵՄ-ն որդեգրեց տարածաշրջանային մոտեցումը՝ համադրելով տարբերակման քաղաքականության հետ: ԵՀՔ-ն իր Գործողությունների ծրագրով ամրապնդեց ԵՄ-ի և Վրաստանի միջև ինստիտուցիոնալ համագործակցությունը՝ կենտրոնանալով ԵՄ-Վրաստան քաղաքական համագործակցության արդիականացման վրա, ներառյալ արդարադատության, օրենքի գերակայության և կառավարման ոլորտները[3]:

Հայաստանի և ԵՄ-ի միջև հարաբերությունները զարգացան ավելի դանդաղ տեմպերով: Առաջին հերթին բանակցելով և հետևելով ԵՀՔ Գործողությունների ծրագրերի իրագործմանը և բացելով ԵՄ պատվիրակություն Երևանում, հարաբերությունները մնացին բավականին մակերեսային: Չնայած Հայաստանը ներառված էր ԵՀՔ-ի կազմում, ԵՄ ներկայությունն ու ներգրավվածությունն այնքան արագ չէին աճում, որքան ԵՄ-Վրաստան հարաբերությունների դեպքում: Դա պայմանավորված էր նրանով, որ Վրաստանը դիվանագիտական օղակների միջոցով ակտիվորեն հայտնում էր ԵՄ-ի հետ համագործակցության պատրաստակամության մասին, մինչդեռ Հայաստանն այդչափ մեծ ակտիվություն չցուցաբերեց: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ ԵՄ-ն զարգացման գրավիչ մոդել էր Հայաստանի և Վրաստանի հասարակությունների համար: Շատերը հույս ունեին, որ երկարաժամկետ հեռանկարում կարող է նաև այդ պետությունների համար ԵՄ-ին անդամակցելու հավանական հեռանկար լինել[4]: Այնուամենայնիվ, ծրագիրը սահմանափակ հաջողություններ ունեցավ, քանի որ ուներ բարդ կառուցվածք և ընդգրկում էր տարբեր շահեր ու գերակայություններ ունեցող պետությունների:

Ինչ վերաբերում է Արևելյան գործընկերությանը (ԱլԳ), թեև մասնակից պետությունները ձգտում են խորացնել երկկողմ հարաբերու-

---

[2] **Lynch D.,** The EU: Toward A Strategy, The South Caucasus: A Challenge for the EU (Edited by D. Lynch), Chaillot Paper no. 65, EU Institute for Security Studies, Paris, 2003, p. 179.

[3] **Khuntsaria T.**, External Democracy Promotion in Georgia: The Role of The European Union, University of Oxford, 2014, p. 78.

[4] **Popescu N.,** ENP and EaP: relevant for the South Caucasus?, *South Caucasus – 20 Years of Independence*, Friedrich-Ebert-Stiftung, 2011, pp. 316-334.

թյունները ԵՄ-ի հետ, ծրագրի հեղինակները փորձում են ԱլԳ երկրները ներկայացնել իբրև տարածաշրջան: Սակայն, պետություններից յուրաքանչյուրն ունի իր պետական շահերն ու գերակայություններն ԵՄ-ի հետ հարաբերություններում: Ի տարբերություն Հայաստանի՝ Վրաստանը բնութագրվում է որպես ԵՄ ինտեգրմանը ձգտող պետություն: Անկախություն հռչակելուց ի վեր Վրաստանի արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից համարվեց եվրոպական կառույցների հետ հարաբերությունների հաստատումը, մասնավորապես՝ ԵՄ անդամակցությունը: ԱլԳ շրջանակներում Վրաստանը ամրապնդեց և խորացրեց հարաբերությունները ԵՄ-ի հետ՝ 2014թ. հունիսին կնքելով Ասոցացման համաձայնագիր, որն ուժի մեջ է մտել 2016թ. հուլիսի 1-ից: Համաձայնագիրը և նրա մաս հանդիսացող Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու համաձայնագիրը (ԽՀԱԱԳ) հիմք են ստեղծում Միության հետ քաղաքական և տնտեսական ինտեգրման համար[5]: Թեև չկան հստակ հեռանկարներ Վրաստանի ԵՄ ինտեգրման համար, բացի այն որ Ասոցացման համաձայնագրով ստանձնած պարտավորությունների շրջանակներում պետությունն ունի հնարավորություն վերափոխել ներկա սոցիալ-քաղաքական իրավիճակը և տնտեսությունը՝ համապատասխանեցնելով ԵՄ չափանիշներին, Վրաստանի համար ԵՄ ինտեգրումը մնում է երկարաժամկետ ռազմավարական գերակայություն:

Հայաստանի հետ հարաբերություններն առանձնահատուկ են, քանի որ ձախողելով Միության հետ Ասոցացման համաձայնագրի ստորագրումն ու լինելով Ռուսաստանի գլխավորած Եվրասիական տնտեսական միության անդամ պետություն, միաժամանակ համագործակցում է նաև ԵՄ-ի հետ: Ներկայումս Միության հետ հարաբերությունները կարգավորվում են Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) շրջանակներում, որը զգալի հնարավորություններ է ստեղծում Հայաստանի իրավական և քաղաքական համակարգերի հետագա եվրոպականացման համար[6]: Պետությունը շարունակում է խորացնել համագործակցությունը

---

[5] The European Union and Georgia, https://www.eeas.europa.eu/georgia/european-union-and-georgia_en.

[6] **Խվորոստյանկինա Ա.**, ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի նշանակությունը Հայաստանի իրավական համակարգի համար, *Հայկական Քաղաքագիտական Հանդես,* 1 (11), 2019, էջ 71-102:

Միության հետ այն ոլորտներում, որոնք համադրելի են Հայաստանի ԵԱՏՄ-ից բխող պարտավորությունների հետ:

Չնայած ներկայումս Հայաստանում և Վրաստանում ԵՄ ակնհայտ ներկայությանը, կան արտաքին և ներքին գործոններ, որոնք զգալիորեն ազդում են նշված երկրների և Միության համագործակցության խորացման վրա: Բացի այն մարտահրավերներից, որոնք ունեն Հայաստանը և Վրաստանը ԵՄ ինտեգրման շրջանակներում, ԵՄ նույնպես ունի որոշ խնդիրներ, որոնք իրենց հերթին խոչընդոտ են այդ պետությունների ԵՄ ավելի արագ ինտեգրմանը: Անհրաժեշտ է դիտարկել մի քանի հիմնական մարտահրավերներ.

1. Աշխարհաքաղաքական անբարենպաստ հանգամանքներ (Ռուսաստանի դիրքորոշում). ԵՄ-ի և ԱլԳ երկրների հիմնական մարտահրավերներից մեկը Ռուսաստանի դիվանագիտական և քարոզչական ճնշումներից ազատվելն է: ԵՄ անդամ երկրների մի խումբը Ռուսաստանին դիտում է որպես սպառնալիք, մյուս խումբը վերջինիս համարում է որպես հնարավոր գործընկեր: Այնուամենայնիվ, Ռուսաստան-ԵՄ հարաբերություններն անորոշ են: Ռուսաստանը կողմ չէ ԱլԳ և ԵՄ անդամ երկրների սերտ հարաբերություններին: Ռուսաստանը չէր կարող ընդունել ԱլԳ երկրների «արևմտյան» ընտրությունը, որի վկայությունը ռուս-վրացական և ռուս-ուկրաինական տարաձայնություններն են, որոնք հանգեցրին ռազմական կոնֆլիկտների: Ռուսաստանի դիրքորոշումը շարունակում է մնալ ԵՄ երկմտանքի հիմնական գործոններից մեկը՝ արևելյան ընդարձակման առումով[7]:
2. Ժողովրդավարության անկումը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում. վերջին տարիներին Հունգարիայում և Լեհաստանում ժողովրդավարության անկում է նկատվում: Եվ չնայած, որ այդ զարգացումները դեռևս որևէ շոշափելի ազդեցություն չեն ունեցել ԵՄ-ի ներսում քաղաքական որոշումների կայացման գործընթացի վրա, խնդիրը շարունակում է մնալ, և քաղաքական գործիչները շարունակում են արտահայտել իրենց մտահոգությունները: Իրավիճակը զարգացել է այն աստիճանի, երբ դիտարկվում է նույնիսկ վերը նշված պետությունների

[7] **Beraia E.,** European Union Eastern partnership programme in Georgia, *United Europe*, No 11, 2017, pp. 67-77.

նկատմամբ պատժամիջոցների կիրառումը: Այնուամենայնիվ, այդ հարցի շուրջ հստակ դիրքորոշում չկա: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում ժողովրդավարության այդպիսի անկումը ստիպում է ենթադրել, որ ԵՄ անդամ դառնալը ժողովրդավարական համախմբման երաշխիք չէ: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ ԵՄ-ի համար առաջնայինը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ժողովրդավարության հաստատումն է: Սակայն, Հայաստանի և Վրաստանի պարագայում, խնդիրն էլ ավելի բարդացնում այն հանգամանքը, որ ոչ միայն նշված պետությունների, այլև հարևան պետությունների շրջանում գրեթե ոչ մի երկիր չունի զարգացած ժողովրդավարություն եվրոպական հեռանկարով:

3. Մասնատված տարածաշրջան (fragmented region). ԵՄ ընդլայնման պատմությունը հուշում է, որ տարածաշրջանային մոտեցումն ընդլայնման նպաստավոր օրինաչափությունն է: Այլ կերպ ասած, ԵՄ-ն ընտրում է ընդլայնման հաջորդ ուղղությունը դեպի որոշակի տարածաշրջան և ոչ թե հատուկ երկիր: Թերևս, միակ բացառությունը Հունաստանի անդամակցությունն էր 1981թ.[8]: Հայաստանի և Վրաստանի դեպքում հանգամանքները բավականին առանձնահատուկ են, քանի որ երկրները նախընտրել են մի շարք տարբեր, և որոշ դեպքերում հակադրվող ինտեգրացիոն դաշինքների, կազմակերպությունների և ծրագրերի անդամակցություն, ինչն էլ ստիպում է պետություններին շարժվել տարբեր ուղղություններով: ԵՄ ինտեգրումը մնում է երկարաժամկետ ռազմավարական գերակայություն Վրաստանի արտաքին և ներքին քաղաքականության համար, որտեղ Միությանը անդամակցությանը լայն աջակցություն է ցուցաբերվում ինչպես կառավարության, այնպես էլ ընդդիմության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կողմից: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա երկիրը անդամակցում է Ռուսաստանի գլխավորած Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) և Հավաքական անվտան-

[8] **Gegeshidze A.**, The European perspectives of Georgia: How to bring closer the future, *Towards unlocking Georgia's European perspective*, LMF, 2018, pp. 8-25. Gegeshidze A., The European perspectives of Georgia: How to bring closer the future, *Towards unlocking Georgia's European perspective*, LMF, 2018, pp. 8-25.

գության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ): Երկիրը ներառված է նաև ԱՊՀ-ի Հակաօդային պաշտպանության միասնական համակարգում: Ռուսաստանը նաև համարվում է Հայաստանի ռազմավարական գլխավոր դաշնակիցը: Հատկանշական է, որ Հայաստանի տարածքում տեղակայված է ՌԴ ԶՈՒ 102-րդ ռազմաբազան և Անվտանգության դաշնային ծառայության (ԱԴԾ) սահմանապահ վարչությունը, որը հայ սահմանապահների հետ համատեղ իրականացնում է Իրանի և Թուրքիայի հետ պետական սահմանի պաշտպանությունը: Թեև Ռուսաստանի հետ ունեցած սերտ դաշնակցային հարաբերություններին և ԵԱՏՄ անդամակցությանը, Հայաստանը և ԵՄ-ն շարունակում են համագործակցել այն ոլոտներում, որոնք համադրելի են Հայաստանի՝ ԵԱՏՄ-ից բխող պարտավորությունների հետ[9]:

4. Չլուծված հակամարտությունները Լեռնային Ղարաբաղում, Աբխազիայում և Հարավային Օսիայում հաջորդ հիմնական խոչընդոտն են հանդիսանում, քանի որ դրանք երկրները դարձնում են որպես բնորոշ անկայուն տարածք, որոնց կարգավորումն առանցքային խնդիր է պետություններում քաղաքական կայունության և տնտեսական բարգավաճման համար: 2020թ. Արցախյան 44-օրյա պատերազմը սրեց առկա մարտահրավերները և խիստ վատթարացրեց տարածաշրջանում անվտանգության միջավայրը:
5. Հիմնական մարտահրավերներից են նաև 2009թ. Հունաստանի տնտեսական ճգնաժամը, որը բացասաբար անդրադարձավ նաև Եվրոգոտու այլ երկրների վրա[10]: Փախստականների անկանոն հոսքը, իր հերթին, նոր այլախոհության պատճառ դարձավ[11]: ԵՄ-ի համար կարևոր խնդիր է նաև Բրեքսիթը, քանի որ դրա արդյունքում ԵՄ պատմության մեջ առաջին անգամ սկիզբ դրվեց Միությունը լքելու գործընթացին[12]: Այս երեք մարտահրավերների

[9] **Paul A.**, The EU and the South Caucasus – Time for a stocktake, *The South Caucasus Between integration and fragmentation, EPC,* 2015, pp. 77-84.
[10] The European Union: The Threat of Disintegration – EuroMemorandum 2017, European Economists for an Alternative Economic Policy in Europe, EuroMemo Group, 2017.
[11] The EU and the Refugee Crisis, Publications Office of the European Union, Luxembourg, 2016.
[12] **Brexit in brief**, https://ec.europa.eu/info/european-union-and-united-kingdom-forging-new-partnership/brexit-brief_en,

հետ միասին ԵՄ անդամ պետություններում առաջացած ազգային շարժումները[13], ինչպես նաև մի շարք պետությունների տարածքային միավորներում՝ սեցեսիոնիստական շարժումները հանգեցրին անվստահության բարձրացմանը ԵՄ ինտեգրման նկատմամբ[16]:

Հետևյալ մարտահրավերների վերլուծությունից կարելի է ենթադրել, որ Հայաստանը և Վրաստանը դեռևս չունեն մեծ հեռանկարներ ԵՄ ինտեգրման համար: Հայաստանը և ԵՄ-ն պետք է շարունակեն և խորացնեն քաղաքական և տնտեսական երկխոսությունն այն ոլորտներում, որոնք համադրելի են ԵԱՏՄ շրջանակներում Հայաստանի ունեցած պարտավորությունների հետ: ԵՄ-ն պետք է ընդլայնի իր ներկայությունը Հայաստանում, աջակցություն ցուցաբերի հայկական ինստիտուտներին, քաղաքական դերակատարներին և քաղաքացիական հասարակությանը ժողովրդավարական բարեփոխումներ իրականացնելու հարցում: Նման ընդլայնված ներկայությունը, ամենայն հավանականությամբ, կամրապնդի ՀՀ կառավարության հանձնառությունը՝ իրականացնել ՀԸԳՀ-ով ստանձնած պարտավորությունները[17], որը զգալի հնարավորություններ է ստեղծում Հայաստանի իրավական և քաղաքական համակարգերի հետագա եվրոպականացման համար: Համաձայնագրի իրականացումը նաև թույլ կտա ԵՄ վերականգնողական միջոցառումների շնորհիվ հասնել երկրի ժողովրդավարական և կայուն զարգացմանը, ինչպես նաև ստեղծել երկկողմ համագործակցության ավելի խորը, դինամիկ և հավակնոտ շրջանակ[18]: Անհրաժեշտ է նաև նախաձեռնել միջոցառումներ, ներքին ու արտաքին այն բոլոր գործոններին հակազդելու նպատակով, որոնք կխոչընդոտեն ՀԸԳՀ արդյունավետ իրականացմանը:

Չնայած ԵՄ-ն համագործակցում է քաղաքացիական հասարակության հետ, այն պետք է դիտարկի քաղաքացիական հասարակու-

---

[13] **Шибкова М.,** Идеологический и стратегический евроскептицизм в политической жизни Евросоюза, *Сравнительная политика*, Том 7, № 4, 2016, сс. 13-24.

[16] **Bireri M.**, Separatism in the EU, Center for Security Studies, CSS Analysis in Security Policy, No 160, Zurich, 2014.

[17] **Grigoryan H.**, European democracy support in Armenia, *European Partnership for Democracy,* 2019, pp. 44-48.

[18] **Terzyan A.**, Bringing Armenia Closer to Europe? Challenges to the EU-Armenia Comprehensive and Enhanced Partnership Agreement Implementation, *Romanian Journal of European Affairs,* Vol. 19, No. 1, 2019, pp. 97-110.

թյան ավելի պարբերաբար ներգրավվումը Հայաստանի հետ իր քաղաքական համագործակցության մեջ: Քաղաքացիական հասարակությունը պետք է շարունակաբար տեղական քաղաքական և թեմատիկ փորձաքննության ռեսուրս հանդիսանա ԵՄ-ի համար: Սա հատկապես արդիական է հաշվի առնելով ընթացիկ ժողովրդավարական բարեփոխումները: ԵՄ-ն պետք է ուսումնասիրի նաև դատական համակարգի անկախության ամրապնդման ուղիները, օրինակ՝ խորհրդատվություն նշանակելու տարբեր մեխանիզմների կամ դատավորների ստուգման համակարգի վերաբերյալ[19]: Բացի այդ անհրաժեշտ է նաև երկրում բարձրացնել ընդհանուր իրազեկվածության մակարդակը, քանի որ հասարակության որոշ հատվածներում դեռ առկա է սահմանափակ տեղեկացվածություն ԵՄ քաղաքականության և համաձայնագրի էության վերաբերյալ[20]:

Ինչ վերաբերում է Վրաստանին, չնայած վերը նշված բոլոր մարտահրավերների,ն թե՛ ԵՄ-ն, և թե՛ Վրաստանը փորձում են հաղթահարել բոլոր խոչընդոտները Վրաստանի ավելի արագ ինտեգրման համար: Սակայն Վրաստանը դեռևս շատ անելիք ունի ինտեգրման հեռանկարի առաջխաղացումը խթանելու համար: Առաջին քայլը Ասոցացման համաձայնագրի շրջանակներում Վրաստանի կողմից ստանձնած պարտավորությունների արագ և որակյալ կատարումն է: Վրաստանը պետք է շարունակի ԱԼԳ շրջանակներում իրականացվող բարեփոխումների շարքը՝ պահպանելով և ամրապնդելով իր դերակատարությունը այդ ծրագրում: Չլուծված հակամարտությունները Աբխազիայում և Հարավային Օսիայում հիմնական խոչընդոտն են հանդիսանում, որոնց կարգավորումը որևէ առաջընթաց չունի: Հետևաբար, անհրաժեշտ է մեծացնել ԵՄ ներգրավվածությունը հակամարտության կարգավորումը կանխող արտաքին և ներքին գործոնների չեզոքացման գործում, ներառյալ Ռուսաստանի ագրեսիան: ԵՄ ինտեգրման հեռանկար ունենալու համար Վրաստանը պետք է բարելավի իր պատկերը և երկրի ընդհանուր իրազեկությունը եվրոպական քաղաքական գործիչների, ինչպես նաև հետազոտական կենտրոնների և հանրության շրջանում: ԵՄ ինտեգրման այս գործոնի կարևորու-

---

[19] **Grigoryan H.**, նշվ. աշխ.:

[20] **Delcour L.**, **Alieva L.**, **Kostanyan H.**, EU relations with Armenia and Azerbaijan, *Policy Department, Directorate-General for External Policies,* European Parliament, Belgium, 2017, pp. 17-19.

թյունը հատկապես զգացվում է ԵՄ անդամ երկրներում, որոնք ունեն եվրոսկեպտիկ միտումներ: Հետևաբար, ցանկացած երկիր պետք է ունենա ԵՄ հատուկ արտաքին հաղորդակցության ռազմավարություն: Վրաստանը (ինչպես նաև Ուկրաինան և Մոլդովան) տնտեսապես ավելի քիչ զարգացած է, քան նախատեսված է Կոպենհագենյան չափանիշներով: Հետևաբար, անհրաժեշտ է սոցիալ-տնտեսական արագ զարգացում և բնակչության բարեկեցության մեծ աճ[21]:

Այսպիսով, նշված մարտահրավերների ուսումնասիրությունից հետո պարզ է դառնում, որ պետությունները դեռևս շատ անելիք ունեն Միության հետ համագործակցության խորացման և ինտեգրման ճանապարհին, և դժվար է խոսել ԵՄ ինտեգրման հեռանկարների մասին: Ներկայումս Հայաստանի և Վրաստանի ամենակարևոր և առաջնային քայլը, համապատասխանաբար, ՀԸԳՀ-ով, Ասոցացման համաձայնագրով ստանձնած պարտավորությունների արագ և պատշաճ կատարումն է: Միության հետ համագործակցության խորացման և ինտեգրման ճանապարհին առաջխաղացում ունենալու համար անհրաժեշտ է նաև ընդլայնել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներն ու խորացնել համագործակցությունը՝ պետությունների հետագա եվրոպականացման համար: Դրան զուգահեռ կողմերը նաև պետք է քայլեր ձեռնարկեն առկա մարտահրավերները չեզոքացնելու ուղղությամբ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է Հայաստանում և Վրաստանում ԵՄ ինտեգրման առանձնահատկությունների հետազոտությանը: Այս համատեքստում ուսումնասիրվում են ԵՄ-ի նախաձեռնած մի շարք ծրագրեր, ինչպիսիք են Գործընկերության և համագործակցության համաձայնագրերը, Եվրոպական հարևանության քաղաքականությունը, Արևելյան գործընկերությունը և վերջինիս շրջանակներում կնքված Ասոցացման և Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրերը: Հետազոտվում են նաև ԵՄ ինտեգրման մարտահրավերները, որոնց ուսումնասիրությունը անհրաժեշտ է դրանց լուծման հեռանկարները վերհանելու համար, որն էլ կուղղորդի ինտեգրման հեռանկարները պարզելուն:

[21] **Gegeshidze A.**, նշվ. աշխ.:

Հոդվածում հիմնավորվում է, որ ներկայումս Հայաստանը չունի ԵՄ ինտեգրման հստակ հեռանկարներ: Ի տարբերություն Հայաստանի, Վրաստանն ունի հեռանկարներ, սակայն այդ ուղղությամբ գործնական քայլեր չեն ձեռնարկվում: ԵՄ ինտեգրումը մնում է ռազմավարական գերակայություն միայն Վրաստանի համար, մինչդեռ Հայաստանը, լինելով ԵԱՏՄ անդամ պետություն, շարունակում է երկխոսությունն ու համագործակցությունը ԵՄ հետ՝ որպես ԱլԳ անդամ:

Բանալի բառեր. ինտեգրում, ինտեգրման մարտահրավերներ, Արևելյան գործընկերություն, ԵԱՏՄ, ԵՄ:

ОСОБЕННОСТИ ИНТЕГРАЦИИ ЕС В АРМЕНИИ И ГРУЗИИ

Оганнисян Вардуи
Лаборант Институт философии,
социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Статья посвящена исследованию особенностей евроинтеграции в Армении и Грузии. В этом контексте изучается ряд программ, инициированных ЕС, таких как Соглашение о партнерстве и сотрудничестве, Европейская политика соседства, Восточное партнерство и заключенные в его рамках Соглашения об ассоциации и Соглашение о всеобъемлющем и расширенном партнерстве. Также изучаются вызовы интеграции ЕС, изучение которых необходимо для выделения перспектив их решения, что приведет к уточнению перспектив интеграции.

В статье утверждается, что в настоящее время у Армении нет четких перспектив интеграции в ЕС. В отличие от Армении, у Грузии есть перспективы, но практических шагов в этом направлении не предпринимается. Интеграция в ЕС остается стратегическим приоритетом только для Грузии, в то время как Армения, будучи государством-членом ЕАЭС, продолжает диалог и сотрудничество с ЕС как член ВП.

Ключевые слова: интеграция, вызовы интеграции, Восточное партнерство, ЕАЭС, ЕС.

FEATURES OF EU INTEGRATION IN ARMENIA AND GEORGIA

Hovhannisyan Varduhi
Laborant of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

SUMMARY

The article is devoted to the research of the features of EU integration in Armenia and Georgia. In this context, a number of programs initiated by the EU, such as the Partnership and Cooperation Agreements, the European Neighborhood Policy, the Eastern Partnership and the Association and Comprehensive and Enhanced Partnership Agreements concluded within the framework of the latter, are studied. The challenges of EU integration are also explored, the study of which is necessary to highlight the perspectives of their solution, which will lead to clarifying the perspectives of integration.

To the end it is justified, that currently Armenia has no clear prospects for EU integration. Unlike Armenia, Georgia has prospects, but no practical steps are taken in that direction. EU integration remains a strategic priority only for Georgia, while Armenia, being an EAEU member state, continues dialogue and cooperation with the EU as a member of the EaP.

Key words: integration, integration challenges, Eastern Partnership, EAEU, EU.